

Յակոբոս 4:1,7,8,10 (James 4:1,7,8,10)

«Կեղրոնացում»

Վեր. Ստեփան Մնջերեան

Հայ Աւետարանական Գողգոթա Եկեղեցի 02.24.02

Կարդանք թուղթ Յակոբոս չորրորդ գլուխ.

Կոիւ եւ անհամաձայնութիւն կեանքի մէկ մասն են իրարու մէջ, գործի մէջ, տան եւ եկեղեցիի մէջ: Անհամաձայնութիւնը մեր սիրտն ու հոգին կը կոտրէ. մեզ անհանգիստ կ'ընէ եւ կ'առաջնորդէ մեղքի:

Յակոբոս 4:1ը սա հարցումը կ'ուղղէ մեզի, *«Ու՞րկէ են պատերազմները եւ ու՞րկէ են կոիւները ձեր մէջ:»* Այո, ու՞րկէ կուգան ասոնք: Յակոբոս պատասխանը կուտայ, *«Զ՞է որ ձեր ցանկութիւններէն, որոնք ձեր անդամներուն մէջ կը պատերազմին:»*

Ըսուած է, *«Թշնամին գտանք՝ որ մենք ենք.»* Մեր ներսէն կ'ուզայ անհամաձայնութիւնը: Յակոբոս կըսէ թէ կոիւներու արմատը մեր անձնասէր դիրքը եւ փափաքներն են:

Աստուած չուզեր որ կոենք այս բերը:

Յակոբոս 3 հատ իրատ կուտայ մեզի 4րդ գլխուն մէջ: Առաջինը կը տեսնենք 7րդ համարին մէջ: *«Հնազանդեցէ՛ք Աստուծոյ»,* կեանքի Աստուծոյ տուր, Իրեն վստահէ՛:

Անտրէ (Andre) հսկան 7 ոտք եւ 4 inch եւ 500 lb. կը կշռէր եւ wrestler (գօտեմարտող) էր. եւ զինք կը կոչէին 'ազնիւ հսկայ' հակառակ իր ոյժին եւ հասակին: Ան միշտ անվախ էր, ինքնավստահ եւ պէտք չէր զգար ինքզինքը հերոս ցուցունելու:

Ես կը սիրեմ իմ տղաքներուս հետ կոուիլ - Յը մէկ զիս կը տապալեն եւ վրաս կը հեծնեն: Ես կընամ զիրենք տապալել, քանի որ անի մեծ եւ զօրաւոր եմ: Բայց կուզեմ իրենք յաղթեն:

Տէրը մեր գորութիւնն ու ապաւէն է: Այսօր ունինք սքանչելի Փրկիչ մը մեր սրտերուն շատ մօտ: Ան մեզ կը հոգայ, կը պաշտպանէ: Համբերող ըլլանք իրարու հանդէպ, նոյնիսկ երբ վիրաւորուած ենք, վստահինք Աստուծոյ քանի որ Ան արդարութիւն կը գործէ:

Երկրորդ խրատը կը գտնենք ծրոյ համարին մէջ, «Աստուծոյ մօտեցէ՛ք, եւ անհկա ձեզի պիտի մօտենայ:» Թոյլ տուր Աստուծոյ որ սիրտդ փոխէ:

Օր մը մարդ մը բժիշկին գնաց, քանի որ պաղ ունէր, բժիշկը ըսաւ իրեն, «Տուն գնայ, տաք բաղնիք առ, վերջը պատուհանդ բաց, եւ պաղ օդ շնչէ, մտիր անկողին եւ մի քանի օր վերջ ֆոլս եկուր:»

Մարդը ըսաւ, «Եթէ այս ընեմ pneumonia կունենամ:»

«Այս,» ըսաւ բժիշկը, «Pneumoniaն կրնանք բժշկել բայց ո՛չ պաղը:»

Յանախ չանք կ'ընենք բժշկելու սխալ հիւանդութիւնը, այսինքն անհամաձայնութիւնը կամ կոխը: Բայց կարելոր բայը մեր մօտեցումն է մեր Փրկչին: Հարցնենք Աստուծոյ որ ներգործէ մեր սրտերէն ներս:

Երրորդը կը գտնանք 10րդ համարին մէջ: «Տէրոջը առջեւ խոնարհեցէ՛ք, ու ան ձեզ պիտի բարձրացնէ:» Յիշենք որ մենք Աստուծոյ առջեւ մեղաւոր ենք:

Օր մը Winston Churchillին հարցուցին, «Կուրախա՞նաս երբ մեծ բազմութիւն քեզ մտիկ կընէ:»

Ան պատասխանեց, «Այո բայց եթէ զիս կախաղան հանէին, շատ աւելի բազմութիւն պիտի ըլլար:»

Ի՞նչ է խաղաղութիւն. կոխի պակասը խաղաղութիւն չ'է: Հոռմի կայսրութիւնը գրաւած էր աշխարհը, մարդիկ մնացած էին, անկարող կոուելու. բայց խաղաղութիւն չկա՛ր:

Խաղաղութիւնը մեր ներսիդին կըսկսի: Ծննդոցի մէջ կը տեսնենք Ադամ եւ Եւա որ պահուտեցան քանի որ մեղանջած էին: Աստուծմէ պահուտիլը ահաւոր վիճակ մըն է: Օրհնութիւն է Աստուծոյ հետ հաշտ ըլլալը: Ուրեմն հնազանդիլ Աստուծոյ մօտենալ Աստուծոյ եւ Անոր առջեւ խոնարհիլ, այս վիճակն է որ մեզի կուտայ Աստուծոյ խաղաղութիւնը: Հոս պիտի գտնենք կոխի եւ անհամաձայնութեան լուծումը:

Copernicus մեծ գիտնական մը էր. ան տիեզերքը մեզի բացատրեց իր նոր գիտերով: Իր թամբանին վրայ այս գրուած է. «Պողոսի տրուած համակրանքը չեմ փնտռեր. Պետրոսի տրուած շնորհքը չեմ ուզեր. միայն կը խնդրեմ այդ ներումը որ տրուեցաւ աւագակին:» Իսկական խաղաղութեան փափաքը Աստուծոյ հետ:

Յակորոս յստակ կերպով կը ցուցունէ թէ մարդ էակը առանց Աստուծոյ, միայն ինքզինքը կը խորհի եւ ուրիշները կ'անտես'է: Մեր շուրջը կան անձեր որ օգնութեան եւ սիրոյ կը կարօտին. մեզի կը մնայ Յիսուսի սիրով մօտենալ անոնց:

Ուրեմն յեշեմք՝ հնազանդիլ Աստուծոյ, մօտենալ Աստուծոյ եւ խոնարհիլ Անոր առջեւ, ապա Աստուած Իր շնորհքով եւ զօրութեամբ մեզ պիտի առաջնորդէ՝ որ օգտակար ըլլանք շատերու, նոյնիսկ մեր տան եւ մեր շրջանակին: Պիտի կրնանք տարածել Աստուծոյ խաղաղութիւնը եւ բժշկութիւնը: